ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 18-19-22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

13 դեկտեմբերի 2018թ. քաղաք Երևան

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ՝ Ռ. ՍԻՆՈՅԱՆԻ

ԿԿ-ի անդամներ՝ Ռ. Դալլաքյան
Հ. Բաբայան
Հ. Իգիթյան

քարտուղար Բ. Ղալոյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 08/12/18թ. «Արարատ-2»-«Շիրակ-2» (ԱԽ103) խաղին «Արարատ-2» թիմի ֆուտբոլիստ Պողոս Այվազյանի (N 13188) հեռացման մասին (ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելու համար) /զեկուցող Բ. Ղալոյան/

2. 08/12/18թ. «Երևան»-«Յունիոր Սևան» (ԱԽ108) խաղին Երևան թիմում հանդես է եկել որակազրկված ֆուտբոլիստ՝ Իվան Լատիշևը (N 31868) /զեկուցող Բ. Ղալոյան/

3. 08/12/18թ. «Արմավիր»-«Արմենիա Թրավել» (ՖՁ003) խաղին դաշտի տեր թիմը չուներ համակարգիչ խաղը անցկացնելու համար /զեկուցող Բ. Ղալոյան/

1. 08/12/18թ. «Արարատ-2»-«Շիրակ-2» (ԱԽ103) խաղին «Արարատ-2» թիմի ֆուտբոլիստ Պողոս Այվազյանի (N 13188) հեռացման մասին (ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելու համար)

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. 08/12/18թ. «Արարատ-2»-«Շիրակ-2» (ԱԽ103) խաղին «Արարատ-2» թիմի ֆուտբոլիստ Պողոս Այվազյանի (N 13188) հեռացման համար, ՀՖՖ-ի Կարգապահական կանոնակարգի 16-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, «Արարատ» ֆուտբոլային ակումբին տուգանել 25000 ՀՀ դրամ

2. 08/12/18թ. «Երևան»-«Յունիոր Սևան» (ԱԽ108) խաղին Երևան թիմում հանդես է եկել որակազրկված ֆուտբոլիստ՝ Իվան Լատիշևը (N 31868)

ՈՐՈՇԵՑԻՆ՝

2. 08/12/18թ. «Երևան»-«Յունիոր Սևան» (ԱԽ108) խաղին «ՖԱ Երևան» ակումբի կողմից խախտվել է ՀՀ պրոֆեսիոնալ ֆուտբոլի 2018-2019թթ խաղաշրջանի Մրցումների անցկացման կանոնակարգի հոդված 13/1-ի գ/ ենթակետի պահանջը, որի հետևանքով «Երևան» թիմում որակազրկված ֆուտբոլիստ է մասնակցել խաղին:

ՀՖՖ-ի Կարգապահական կանոնակարգի 15-րդ հոդվածի 24-րդ կետի համաձայն՝ «Երևան» թիմին գրանցել տեխնիկական պարտություն, իսկ «Յունիոր Սևան» թիմին գրանցել տեխնիկական հաղթանակ: ՖԱ Երևան ակումբին տուգանել 50000 ՀՀ դրամ

3. 08/12/18թ. «Արմավիր»-«Արմենիա Թրավել» (ՖԶ003) խաղին դաշտի տեր թիմը չուներ համակարգիչ խաղը անցկացնելու համար:

Բացակայել է ինֆորմացիոն սպասարկման համակարգիչը, որը պահանջվում է 2018-2019թթ. մրցաշրջանի ՀՀ Ֆուտզալի Բարձրագույն խմբի Պրոֆեսիոնալ Առաջնության Անցկացման Կանոնակարգի հոդված 11-ի 2 կետով: Հանդիպումը անցկացվել է մեխանիկական անհրաժեշտ սարքավորումների օգնությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

3. 08/12/18թ. «Արմավիր»-«Արմենիա Թրավել» (ՖԶ003) խաղին Համակարգչի բացակայության համար, ՀՖՖ-ի Կարգապահական կանոնակարգի 20-րդ հոդվածի 33-րդ կետի համաձայն՝ Արմավիրի քաղաքապետարանի մարզադպրոց ակումբին տուգանել 10000 ՀՀ դրամ

ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՍԻՆՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Բ. ՂԱԼՈՅԱՆ